



**Saints Joachim & Anne
Armenian Apostolic Church**

Ս. ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԽԱՆԱ
ՀԱՅՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Pastor

Rev. Fr. DIRAN PAPAZIAN, Archpriest
Տ. ՏԻՐԱՆ Ա. Ք. ՔԱՅԱ. ՓԱՓԱՋԵԼԻ, Հովհան

8 Յունիս, 1994

Գեր. Յ. Խաժակ Արք. Պարսամեան,
Առաջնորդ,
Առաջնորդարան Հայոց, Նիւ Սորբ, Ա. Յ.

Սիրելի մորազան,

Ներկայս կը հետեւի 8 Մայիս, 1994 թուակիր նամակիս, եւ կերպով մը կը լայ
անոր լուսմը, դանի որ հոն արծարծուած հարցերը, ինչպէս հանգստեան կոչում,
վեցամսեայ ժամանակացոյց եկեղեցւոյ այցելութեան եւ հրամեշտի մաշկերոյթ,
որոնք առկան մնացեր էին, արդէն իսկ իրենց լուծումը գտած ըլլալ կը թուին:
Կը փութամ տեղեկացնել որ Յունիս 1-ին ծխական խորհուրդի բացառիկ ժողով մը
տեղի ունեցաւ որ միայն եւ միայն յատկացուած էր վերոյիշեալ հարցերու նկա-
տառման:

Հստ վերոյիշեալ հաւաստումին ուրեմն՝ ի զօրու կը մնայ Յունիս Յ0-ի իմ
Հանգստեան կոչման որոշումն: Իսկ ինչ կը վերաբերի տարւոյս երկրորդ կիսամ-
եակին գործադրուելիր ժամանակացոյցին՝ այդ եւս յստակացուեցաւ:

Հստ գոյացած հասկացողութեան՝ ամրան երկու ամիսներուն՝ Յուլիս եւ Օգոս-
տոս՝ մէկական պատարագ պիտի կատարուի, իսկ մնացեալ չորս ամիսներուն՝ երկու-
ական պատարագ, ի փոխարէն որոշ վճարումի մը, նկատի առած նուէրի եւ ժամուցի
ընթացիկ սակագիները, ինչպէս նաեւ ճանապարհածախսի, օթեւանի եւ այլ կապակից
ծախսեր:

Ժամանակացոյցը հետեւեալն է որ կը նդգրկէ տարւոյս երկրորդ կիսամեան, ընդ-
ամենը 10 պատարագ նախատեսելով:

Յուլիս 10 -Վարդավառ-, Օգոստոս 14 -Վերափոխում-, Սեպտեմբեր 11 -Խաչվե-
րաց, 25, Հոկտեմբեր 9 եւ 28, Սոյեմբեր 6 եւ 20 -Եկեղեցւոյ օծման Տարեղարձ-,
Դեկտեմբեր 11 եւ 25 Քրիսմս-:

Հրամեշտի մաշկերոյթը յարմար նկատուեցաւ նոյեմբեր 20-ին թողուլ, որ ինչ-
պէս ըսինք՝ եկեղեցւոյս օծման Տարեղարձի թուականն է: Կը յուսանք ձեր ժամանա-
կացոյցը կը յարմարի եւ այդ օրը մեզի հետ կը լայ:

Կհւզեմ ձեր ուշադրութեան բերել սա պարագան զոր շատ կարեւոր կը համարիմ:
Ծար...

Եսոք . . .

մոյն համաձայնութիւնը որ ունեցանք ներկայ ծխական խորհուրդին հետ, արդէն իսկ համաձայնուած էր նախորդ ծխական խորհուրդին հետ եւ ընդունուած նաև ծխական ժողովին կողմէ, եւ ուրեմն ներկայ ծխական խորհուրդին կը մնար յարգել այս որոշումը եւ նոյնութեամբ ընդունիլ զայն, առանց փոփոխութեան, ինչպէս որ ըրին իրենք յարգելով պաշաճութիւնը:

Այս հարցին կապակցութեամբ՝ եարեւոր է թերեւս գիտար որ՝ տուեալ պարագաներու տակ՝ ես ինքզինքս դրամական գոհողութեան ենթարկած եմ, զրկելով ինքզինքս՝ կղերականներուն սահմանուած՝ տարիներու ծառայութեան համեմատական յաւելեալ իրաւունքս -ինքրիմէնթ-, գոհանալով միայն հիմնական թոշակով։ Այնպէս որ այս հիման վրայ է որ մենք որոշ փոխադարձ հասկացողութեան եկած էինք նախորդ ծխական խորհուրդին հետ, որու ակնարկեցի վերեւ։

Կը յուսամ որ սոյն կարգադրութիւնը իր ամբողջական գիծերուն մէջ ձեր հաւանութեան կարժանանայ եւ առ այդ կը պաշտօնականացնէք զայն առ ի գործադրութիւն։

Ուստի կը խնդրեմ ձեզմէ որ հանգստեան կոչումս հաստատէք տարւոյս Յուլիս 15ն սկսեալ եւ ապա վաւերացնէք յառաջիկայ 6 ամիսներու ընթացքին իմ Հովուական պաշտօնավարութիւնս այցելուի հանգամանքով, ըստ կարգաւորուած ժամանակացոյցին եւ համաձայն մեր գոյացուցած հասկացողութեան։ Եթէ յարմար կը դատէք կրնաք նոյնիսկ պաշտօնապէս Այցելու Հովուի հանգամանք տալ իմ կիսամեայ պաշտօնավարութեանս, մինչեւ տարեվերջ։ Ասիկա սակայն ձեր հայեցողութենէն կախեալ է։ Իմ մտահոգութիւնս այն է որ՝ պէտք է ծխական խորհուրդը ինքզինք պարտաւոր զգայ ենթարկուելու ամբողջապէս մեր երկուստեղ գոյացուցած համաձայնութեան, առանց դոյն փոփոխութեան, հակառակ պարագային դրժում եղած պիտի ըլլայ ինչ որ վայել չէ եկեղեցական մարմնի մը։

Յուսալով որ շուտով կը լսեմ ձեզմէ,

Մնամ ջերմ սիրոյ ողջունիւ,

Խոնար հաբար,

Աղօթակից,



S. Տիրան Աւ. Երեց Փափազեան

Յ.Գ.- Յաւելեալ կամ տւելի ծշգրիտ լուսաբանութեանց համար, եթէ հարկ տեսնէք, կրնաք ծխական խորհուրդի նախկին Առենապետին՝ Տիար Կարպիս Մկրեանինկա կարծիքը առնել, քանի որ այս վերջոյս հետ կատարուած են քոլոր քանակցութիւնները։

 Սոյն